Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2019 թ.
նոյեմբերի 19 -ի N 1730 - Լ
որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԴՐՈՇԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերի դրոշը բաղկացած է երկդեմ պաստառից և ծոպափնջերով քուղերից:

2. Դրոշի պաստառն ուղղանկյունաձև է, երկարությունը 1450 մմ է, լայնությունը՝ 1150 մմ:

3. Կարված է երկտակ մետաքսե մուգ բալերանգ (գույնի համակարգչային հարաբերությունն է՝ M=100%, Y=20%, K=50%) կտորից՝ երեք կողմից երիզված ոսկեգույն ծոպերով:

4. Պաստառի երեսի կողմի կենտրոնական մասում՝ 650 մմ բարձրության վրա ոսկեգույն մետաքսաթելով ասեղնագործված են «Ոստիկանության զորքեր» բառերը, տառերի բարձրությունը 70 մմ է, լայնությունը՝ 50 մմ:

5. Պաստառի հակառակ կողմում՝ 500 մմ բարձրության և 710 մմ լայնության վրա պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը՝ 300 x 300 մմ չափերով:

6. Զինանշանի վերին մասում ոսկեգույն մետաքսաթելով կամարաձև ասեղնագործված են «Հանուն Հայրենիքի» բառերը, տառերի բարձրությունը 60 մմ է, լայնությունը՝ 40 մմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2019 թ.
նոյեմբերի 19 -ի N 1730 - Լ
որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԴՐՈՇԻ

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերի դրոշը (այսուհետ՝ դրոշ) պատվի, փառքի և արիության խորհրդանիշ է: Դրոշը Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերի յուրաքանչյուր զինծառայողի սրբազան պարտքի հիշեցումն է Հայրենիքին անձնուրաց ծառայելու, հասարակական կարգը պահպանելու և հասարակական անվտանգությունն ապահովելու մասին:

2. Դրոշը Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերին հանձնում է Հայաստանի Հանրապետության վարչապետը կամ նրա կողմից լիազորված անձը:

3. Դրոշի հետ հանձնվում է նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի ստորագրությամբ վկայագիր:

4. Դրոշը մշտապես պահվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերի վարչական շենքում:

5. Դրոշի պահման, պահպանման և օգտագործման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերի հրամանատարը:

6. Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերի յուրաքանչյուր զինծառայող պարտավոր է պահպանել և պաշտպանել Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերի դրոշը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

voroshum-Av1024